ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սեպտեմբերի 19-ին Սինոդը մերժեց Երևանի վիճակային Կոնսիստորիայի միջնորդութիւնը Մահմուդջուղ գիւղացի Սեդրակ Սարգսեանին ընդունելու հոգևոր կոչման մէջ։

Սեպտեմբերի 21-ին Սինոդը մերժեց նոյն Կոնսիստորիայի միջնորդութիւնը ժողովելու Սարմուսախլի գիւղի եկեղեցու վերանորոգութեան համար նուիրատուութիւն։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Տ. Խաչիկ վարդապետին բացատրութիւն տալ թէ ո՞ւմ թոյլտուութեամբ էր ժողովում դրամները, որքան է ժողովել, ինչի համար գործադրել և ունի՞ դրամների գործադրութեան համար փաստաթղթեր։

Սեպտեմբերի 23-ին Սինոդը աչքի առաջ ունենալով Սեդրակ Մարգարեանի օտարահպատակութիւնը, հրամայեց վերոյիշեալ Մարգարեանի պսակի գործը Մարմառ Խաչատրեանի հետ Վրաստանի Կոնսիստորիայի յայտարարութեան հետ մատուցանել Վեհափառ Կաթուղիկոսին ի տնօրէնութիւն։

Նոյն թուին Սինոդը հրամայեց ուղարկել Մատթէոս Անդրէասեանի հարկերի ազատման թուղթը Երևանի պ. Նահանգապետին և հարցնել թէ նորա կողմից արգելք չկայ արդեօք վերոյիշեալ Անդրէասեանին քահանայ ձեռնադրելու Արազգայեան գիւղի վերայ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Կարապետ Մզիկեանցին ամուսնանալ Հերիքնազ Գէորգեանի հետ խնամիութեան չորրորդ աստիճանով։

Սեպտեմբերի 28-ին Սինոդը հրամայեց ուղարկել Սիմէոն Մատթէոսեանի հարկերի ազատման թուղթը Երևանի

պ. Նահանգապետին և հարցնել թէ նորա կողմից արդեւք չկայ վերոյիշեալ Մատթէոսեանին քահանայ ձեռնադրելու Կարմիր-Խարաբայ գիւղի վերայ։

Նոյն թուին Սինոդը շրջաբերականով պատուիրեց բոլոր վիճակային Կոնսիստորիային նախ՝ ծանուցանել այն բոլոր անձանց, որոնք ցանկանում են Ռուս-ուղղափառ դաւանութիւնից դառնալ Հայաստանեայց լուսաւորչական եկեղեցու գիրկը, դիմել խնդրագրով Նախարարների Ցանձնաժողովի բացատրութեան համաձայն, կամ տեղի Նահանգապետին և կամ դաւառական իշխանութեան միջոցով։ Երկրորդ ցանկացողներին ընդունել Լուսաւորչական դաւանութեան մէջ կատարելով վերոյիշեալ Կաթուղիկոսի յուլիս 16 թ. 571 կոնդակի միտքը։

Նոյն թուին Սինոդը մերժեց Բեսարաբիոյ Կոնսիստորիայի միջնորդութիւնը Մարտիրոս Պատիկեանի և Զարդար Միրջանեանցի պսակի լուծման համար չգտնելով յարգելի պատճառ։

Սեպտեմբերի 30-ին Սինոդը քննելով վիճ. Կոնսիստորիայի ներկայացրած հոգևորականների այրիների և որբերի հոգատարութեան ցուցակները, գտել է որ ուղիղ է վարած։

Նոյն թուին Սինոդը հրամայեց ուղարկել Սարիբէկ Մատեոսի Գէորգեանի զինուորագրութեան վկայականը Բրիգադայի Պետին և խնդրել ընծայացուի անունը հանել պահեստի զօրքերի շարքից Ուզունքիլիսա գիւղի վերայ քահանայ ձեռնադրելու համար։

Հոկտեմբերի 5-ին Սինոդը հրամայեց հոգևորականութեան մէջ ընդունել Մկրտիչ Կարապետեանին և ուղարկելով հարկերի ազատման թուղթը Երևանի պ. Նահանգապետին խնդրել Նորա տնօրէնութիւնը։

Հոկտեմբերի 7-ին Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի յայտարարութիւնը և հրամայեց ընդունել Աղէք-

սանդը Սողոմոնեանցին հայ-Լուսաւորչական եկեղեցու գիրկը։

Նոյն թուին Սինոդը Կողբ աւանի բնակիչների խնդիրը, որը վերաբերում էր հայ-Լուսաւորչական եկեղեցու գիրկը ընդունուելուն, ուղարկեց Երևանի վիճակային Կոնսիստորիային ի տեղեկութիւն։

Նոյն թուին Սինոդը Մեծ-Շէն գիւղի բնակիչ Յովսեփակիմ Տէր Աստուածատրեանի խնդիրը հոգևորական կոչման մէջ ընդունելու համար, ուղարկեց ի տեղեկութիւն Ղարաբաղի թեմական Առաջնորդին։

Հոկտեմբերի 10-ին Սինոդը թոյլատրեց Վիկտորիոս Քալանթարեանին և Յոյս Արզանգուլեանին ամուսնանալ ազգականութեան վեցերորդ աստիճանով։